

## «Անձնական կարիներում» գրանցվելու ուղեցույց

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պաշտոնական կայքի [www.cesa.am](http://www.cesa.am) «Անձնական կարիներ» բաժնում նոր հաշիվ գրանցելու համար անհրաժեշտ է ընտրել «Գրանցել նոր հաշիվ կոճակը» և հայերենով լրացնել պահանջվող բոլոր դաշտերը՝ կատարելով հետևյալ հրահանգները.

1. Հեռախոսով գրանցվելիս անհրաժեշտ է հեռախոսի առջևի կամ հետևի տեսախցիկով նկարվել նույնականացման քարտով (ID) կամ անձնագրով այնպես, որ պարզ երևա նկարվողի դեմքը և նույնականացման քարտի/անձնագրի վրա առկա լուսանկարով կողմը/էջը՝ հետևյալ օրինակով:

### Պարկեր 1.

#### ID քարտով կամ անձնագրով լուսանկար



կամ



2. Նկարել նույնականացման քարտի դիմերեսն ու դարձերեսը կամ անձնագրի՝ լուսանկարով էջը և սոցիալական քարտը:

### Պարկեր 2.

#### ID քարտի դիմային կողմ կամ անձնագրի լուսանկարով էջ



կամ




### Պարկեր 3.

## ID քարտի դարձերես կամ սոցիալական քարտ



կամ



3. Համակարգչով գրանցվելու պարագայում 1-ին և 2-րդ կետերով պահանջվող գործողությունները կատարելիս պետք է օգտագործել համակարգչին միացված տեսախցիկը:
4. Գրանցվելիս հարկ է նշել էլեկտրոնային փոստի հասցե, որը հետագայում ծառայելու է որպես օգտանուն և անհրաժեշտ է լինելու անձնական կաբինետ մուտք իրականացնելու համար:

*Ուշադրություն.* օգտանունը (նշված էլեկտրոնային փոստի հասցեն) գրանցվելուց հետո փոփոխվել չի կարող: Այլ էլեկտրոնային փոստի հասցեով անձնական կաբինետին հասանելիություն ստանալու ցանկության պարագայում օգտատերը կունենա գրանցման գործընթացը կրկին անցնելու անհրաժեշտություն:

5. Գրանցվելիս հարկ է ընտրել և նշել գաղտնաբառ, որի մուտքագրմամբ հետագայում իրականացվելու է մուտք անձնական կաբինետ: **Գաղտնաբառը պետք է պարունակի լատինատառ առնվազն 8 նիշ՝ ներառյալ առնվազն մեկ մեծատառ, մեկ փոքրատառ, մեկ թիվ և մեկ հատուկ նիշ (+, !, @, #, \* կամ այլն):** Գաղտնաբառը կարող է ունենալ հետևյալ տեսքը՝ 1a1VuR1988+!, ARMENs+65, Simonyan-1965\*:

*Ուշադրություն.* գրանցվելուց հետո գաղտնաբառը վերականգնելու համար անհրաժեշտ է կլիկնի մուտքի էջում ընտրել «Մոռացել եմ գաղտնաբառը» գործիքը և հետևել հրահանգներին:

6. Անհրաժեշտ դաշտերը լրացնելուց հետո պետք է ակտիվացնել հաստատման կոճակը՝ հավաստելով, որ մուտքագրված տվյալները ճիշտ են, ապա սեղմել «Գրանցվել»:
7. Ձեր կողմից մուտքագրված էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի էլեկտրոնային փոստի հասցեի հաստատման հաղորդագրություն, որը բացելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Հաստատել» կոճակը:

### Էլ. փոստի հասցեի հաստատում

-  poreply 14 января, 16:37  
Кому: вам

### Էլեկտրոնային փոստի հասցեի հաստատում

Հարգելի \_\_\_\_\_, խնդրում ենք հաստատել ձեր էլեկտրոնային փոստը



8. Հաստատումից հետո ձեր մուտքագրած տեղեկատվությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում կստուգվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից և ձեզ կուղարկվի անձնական կաբինետում գրանցումը հաստատված լինելու վերաբերյալ հաղորդագրություն:

### Գրանցման հաստատում

-  poreply 14 января, 16:41  
Кому: вам

### Գրանցման հաստատում

Հարգելի \_\_\_\_\_, Ձեր գրանցումը հաստատված է, կարող եք մուտք լինել այստեղից



9. Մուտքն անձնական կաբինետ կարող է կատարվել գրանցման ժամանակ նշված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը մուտքագրելու միջոցով:

**Ուշադրություն.** տեղեկատվական անվտանգության նկատառումներից ելնելով՝ հորդորում ենք գաղտնաբառը չհայտնել որևէ այլ անձի:

**ՍՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՄԲ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՄԵՐԺՄԱՆ**